ԳԼՈՒԽ ԺԶ.

Անդք Ռեմզէ աւանի։ Վանք Ս. Փրկչի։ Թեօր Եուսուֆ Փաշա։ Անտան Ամիրա։ Մահ Պետրոս Պատրիարքի։ Գործ Բդեշխին։ Մեհեմմեդ Ապու Մերագ. Նեղութիւն միաբանաց։ Այլազգիք Սիոնի։ Թողուլ միաբանաց զվանս Ս. Յակոբայ և մեկնիլ 'ի քաղաքէն։

Ի ԺԱՄԱՆԱԿՍ պաշարման Աքքէ քաղաքի, բնակիչք Ռեմզէ աւանի, յերկիւղէ Արաբացւոց՝ խոյս տուեալ անտի եւ եկեալ ամրացեալ էին 'ի քաղաքն Յոպպէ։ Լեռնական Ֆելլահք տեսեալ զաւանն դատարկ և անպատսպար, դիմեցին բազմութեամբ 'ի վերայ նորա, և համարձակ գործեցին զամենայն չարիս, կողոպտեցին զտունս և զեկեղեցիս. և զվանս Հայոց Ս. Գէորգայ՝ յետ դատարկելոյ զամենայն ինչ, խլեալ հանին նաեւ զերկաթս 'ի պատուհանաց, և զայլ տեղիս քանդեալ աւերեցին, եւ կոտորեցին զորս կենդանի գտին յաւանին, մինչ չխնայել նաեւ 'ի հաւատակիցս իւրեանց. բաժանեցին յիւրեանս զաղջկունս և զմանկահասակս, որք մնացեալ էին անդ՝ եւ ընդ աւարին առեալ մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։ Զերծեալ ոմանց 'ի սրոյ ասի հասին յԵրուսաղէմ, և արտասուօք պատմէին զանցս Ռեմզէի։

Իսկ աւարառուքն բազմութեամբ ժողովեալ եկին յԵրուսաղէմ և բանակեցան մերձ 'ի Սիոն, որպէս թէ կազմել զզէնս և երթալ 'ի բանակն Օսմանցւոց։ Եւ 'ի գիշերին այնմիկ մտին 'ի վանս Ս. Փրկչի, յարձակեցին զոր ինչ միանգամ գտին անդ. խորտակեցին զպատկերս և զխաչկալ եկեղեցւոյն և զսեղանն կործանեցին, և աւերեալ եղծին և զայլ տեղիս. և մտեալ 'ի պարտէզն յարմատոյ խլեցին զձիթենիս 33. և անտի մեկնեցան 'ի կողմանս Ռեմզէի։ Արդ 'ի 12 Փետրվար ամսոյ մինչ 'ի մեկնիլ զօրայ Նաբուլիոնի յերկրէն Պաղեստինոյ եւ 'ի ժամանել մեծի Վէզիրին 'ի Յոպպէ, թէ որպիսի անցս չարչարանաց կրեցին 'ի միջոցիս յայսմիկ քրիստոնեայք և վանականք Երուսաղէմի, մանաւանդ Հայք և միաբանք նոցին՝ կարի դառն է պատմել. զի իսպառ նուազեցան 'ի զօրութենէ և ան-